Հավելված 2
2025 թ. «16» հունվարին
կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՐՄ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N_3_

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Արմավիրում» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1141-11018/25 ԱՐՄ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2025-31.12.2025 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2025-30.09.2025 |
| **Ներկայացման օր** | 07.10.2025 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Անահիտ Նահապետյան,<br>Ցերեկային կենտրոնի տնօրեն |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Միասնական սոցիալական ծառայությունների Արմավիրի տարածքային կենտրոնի հետ համագործակցություն.** Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը ՄՍԾ տարածքային կենտրոնի հետ, եղել են վերջինիս կողմից ուղղորդումներ, որոնք ընդգրկվել են կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել են թվով 33 շահառուների կարիքներն ու կարողությունները, որոնցից 32-ն ընդգրկվել են մատուցվող ծառայություններում: Ընդգրկվել են մարզի քաղաքային և գյուղական համայնքների երեխաներ, որոնք ընտրվել են ըստ տարբեր չափանիշների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, Արցախից տեղահանված ընտանքիների երեխաներ, խոցելիության այլ չափանիշներ: Արդյունքում առկա է հստակ նկարագիր յուրաքանչյուր շահառուի կարիքների և կարողությունների վերաբերյալ:

- **Անհատական զարգացման պլանի մշակում**. Գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից մշակվել են բոլոր գնահատված շահառուների անհատական զարգացման սոցիալ-հոգեբանական պլանները: Արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար ունենք հստակ պլան, որի հիման վրա իրականացվել են անհրաժեշտ պարապմունքներն ու ծառայությունները:

- **Ծառայությունների, պարապմունքների ու խմբակների նախանշում**. Շահառուների համար հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները, որտեղ ներառված են 10-15 երեխաներ: Ներկայումս դեռահաս աղջիկների համար ձևավորվել է նաև հելունագործության խմբակ՝ ելնելով նրանց ցանկություններից և կարողություններից, որտեղ ներառված են 8 աղջիկ երեխաներ: Խմբակը վարում է էրգոթերապիստը:

- **Շահառուների ծնողների հետ համաձայնագրերի կնքում**. Բոլոր շահառուների ծնողների հետ կնքվել են համաձայնագրեր՝ անվճար ծառայությունների մատուցման մասին: Շահառուների ծնողները տեղեկացվել են աշխատանքային ժամանակացույցի

մասին: Արդյունքում ունենք իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:

- **Սոցիալական աշխատանք շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների՝ ընտանիքի հետ վերամիավորման ուղղությամբ**. Հաշվետու ժամանակահատվածում գրավոր հարցումներ են ուղարկվել բոլոր 4 շուրջօրյա հաստատություններին: Նրանցից մեկից եկել է բացասական պատասխան, որ չկան վերամիավորման ենթական շահառուներ իրենց հաստատությունում: Մեկ կառույցի կողմից նշվել է, որ իրենք աշխատում են մարզի այլ հասարակական կազմակերպության հետ: Մյուս կազմակերպությունից եղել է արձագանք, համաձայն որի ճիշտ կլինի համագործակցությունն ֆորմալ դարձնել գրավոր հուշագրով և դա անել եկող տարվա սկզբին: Վերջին կազմակերպությունից դեռ արձագանք չենք ստացել: Աշխատանքներն այս ուղղությամբ կշարունակվեն նաև հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

- **Ամենօրյա պարապմունքների, խմբակների ու ծառայությունների մատուցում**. Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ: Ծառայություն է ստացել հուլիսին՝ 136, օգոստոսին՝ 127, սեպտեմբերին՝ 121 երեխա: Շահառուներից 37-ը հաշմանդամություն ունեցող երեխաներ են, իսկ 7-ը՝ Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ են: Կենտրոնում գործում են արտ թերապիայի և նկարչության խմբակները: Այստեղ շահառուները պատրաստում են բացիկներ, տարբեր մեթոդներով ստեղծում են դիզայնի տարբեր ատրիբուտներ, զարդարանքներ, կախազարդեր, կատարում են արտ թերապևտիկ աշխատանքներ, ավազաթերապիա: Ներկայումս ձևավորվել է նաև հելունագործության խմբակ, որտեղ ներառված են 8 աղջիկ երեխաներ: Խմբակը վարում է էրգոթերապիստը:

  Երեխաների հետ տարվել են տարբեր աշխատանքներ: Մասնավորապես, աշխատանքներ ուղղված վարքային շեղումներին, ինքնախնամքի հմտությունների զարգացմանը, ճանաչողությանը, ուշադրության կենտրոնացմանը, մանր մոտորիկայի զարգացմանը, հասակակիցների հետ շփմանն ու հաղորդակցմանը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մի հետաքրքիր և ստեղծագործական աշխատանք, որի ընթացքում երեխաները պատրաստել են տղայի և աղջկա դեմք, ով կրում է գլխարկ: Նրանք նախ՝ գունավորել են դեմքի տարբեր մասերը՝ աչքերը, մազերը, բերանը, ապա ստեղծել շարժական գլխարկ՝ կտրելով ու սոսնձելով: Բացի ստեղծագործական հմտությունների զարգացումից, այս աշխատանքն ուներ նաև կրթական նպատակ: Երեխաները սովորել են, որ ամռան շոգին անհրաժեշտ է կրել գլխարկ, քանի որ այն պաշտպանում է արևի ուղիղ ճառագայթներից և օգնում է

խուսափել արևահարումից: Պարապմունքի ընթացքում քննարկվել է նաև ամառային հիգիենայի և պաշտպանիչ միջոցառումների կարևորությունը: Այսպես, երեխաները ոչ միայն ստեղծեցին ուրախ, գունավոր կերպարներ, այլև ձեռք բերեցին օգտակար գիտելիքներ առողջ ապրելակերպի մասին:

Հաշվետու ժամանակահատվածում երեխաների հետ դիտեցինք նաև մուլտֆիլմ, որտեղ խոսվում էր գիտելիքի ուժի մասին: Մուլտֆիլմում ընդգծվում էր, որ գիտելիքը կարևոր է ինքնազարգացման, ընկերություն պահպանելու և լավ ապագա կառուցելու համար: Դիտումից հետո քննարկեցինք՝ ինչու է կարևոր սովորել, կարդալ, հարցեր տալ և ամեն օր մի նոր բան իմանալ: Դասը ամփոփեցինք խոսքերով, որ գիտելիքը մեզ օգնում է դառնալ լավ մարդ և հասնել հաջողության:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է խմբային աշխատանք, որը սկսվեց ակտիվ խաղերով, որոնք զարգացնում էին շնչառությունը և արագ կողմնորոշվելու ունակությունը: Երեխաները համագործակցեցին թիմում՝ միաժամանակ մարզելով մարմինը և ուշադրությունը: Մեկ այլ խմբային աշխատանքն անցավ ստեղծագործ, ջերմ ու ուրախ մթնոլորտում. բոլորը ոգևորությամբ աշխատեցին, կավը վերածեցին հետաքրքիր ու գունեղ պատկերների: Կավով աշխատելը միաժամանակ զարգացնում է մատների ճկունությունն ու շարժունակությունը, օգնում է հանգստանալ ու կենտրոնանալ, բացում է ստեղծագործական երևակայությունը և հնարավորություն տալիս ինքնաարտահայտման: Երբ այս երկուսը համատեղվում են, ստեղծվում է ջերմ ու ընկերական մթնոլորտ, իսկ վերջում էլ՝ միասնական ու գեղեցիկ արդյունք:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել են նաև էրգոթերապիայի աշխատանքներ մասնավորապես խոհանոցում. էրգոթերապիստը երեխաների հետ պատրաստել են կարկանդակներ, խաչապուրիներ, պիցաներ: Այս աշխատանքները նույնպես զարգացնում են կենցաղավարության որոշ հմտություններ, համագործակցային աշխատանք և սեփական կարողությունների գնահատում և կարևորում:

Մեր փոքրիկները աշնան գալուստը դիմավորեցին գեղեցիկ և ստեղծագործական աշխատանքով: Աշխատանքից մեկը նվիրված էր գունազգացողության զարգացմանը. այն ոչ միայն զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, գունային զգացողությունը և համբերությունը, այլև սովորեցնում է աշխատել խմբով ու միասին ստեղծել գեղեցիկ գործ, սիրել բնությունը, նկատել տարվա եղանակների փոփոխությունները և գնահատել աշնան գույների հրաշքը:

Մեկ այլ խմբային աշխատանքի ընթացքում երեխաները, օգտագործելով բնության անբաժան մասը՝ տարբեր գույների ու ձևերի տերևներ, ստեղծել են աշնանային մրգերի պատկերներ: Տերևների միջոցով պատկերավորվել են խնձորներ, տանձեր, խաղողներ ու սալորներ՝ ընդգծելով աշնան բազմերանգ գեղեցկությունը: Աշխատանը խթանել է

խմբային համագործակցությանը, շարժողական կարողությունների զարգացմանը և գեղագիտական ընկալմանը: Այս գործնական մոտեցումը նպաստել է ոչ միայն երեխաների հմտությունների զարգացմանը, այլև սերմանել է սեր բնության նկատմամբ, սովորեցրել թիմային աշխատանք:

Ամենօրյա ծառայությունների մատուցման շրջանակներում կենտրոն հաճախող բոլոր երեխաներին տրամադրվում է անհրաժեշտ սնունդ, որն իրականացվում է՝ գնելով արդեն պատրաստի փոքրիկ սննդի ընդմիջում:

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվել է նաև անձնական օգնականի ծառայությունը թվով 3 երեխաների, որոնց մատուցվել է ուղեկցման ծառայություն: Այս երեխաները կենտրոն են գալիս հարակից գյուղական համայնքից, ծնողներն աշխատում են և չեն կարող երեխաներին բերել կենտրոն, իսկ երեխաներն ունեն խնդիրներ, չեն կարող կենտրոնի մեքենայով մենակ գալ կենտրոն: Ուստի իրականացվել է ուղեկցման ծառայություն անձնական օգնականի կողմից, որի պարտականությունները դրված են կենտրոնի սոցիալական աշխատողի վրա:

- **Ծնողական դասընթացների կազմակերպում.** Ծնողների հետ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 խմբային քննարկում սեմինար, որին մասնակցել է 35 ծնող: Հաշվետու ժամանակահատվածի առաջին ամսում սեմինարն անցկացնում էր կենտրոնի հոգեբանը, իսկ թեման էր՝ «Զայրույթի կառավարումը երեխայի հետ հաղորդակցման ընթացքում»: Մասնագետի կողմից ներկայացվեց, թե հնարավոր պատճառների դեպքում, ունենալով զայրույթ կամ զայրացած լինելով ինչ-որ բանի կամ մեկի վրա, ինչպես է պետք կառավարել այդ պահին զայրույթը, երբ շփվում և հաղորդակցում են երեխաների հետ: Հատկանշական է, որ շատ հաճախ ծնողների զայրույթը դրսևորվում է երեխաների վրա, անկախ նրանից այդ զայրույթի պատճառը ով էր: Մասնագետի կողմից նշվեցին մոտեցման ձևեր, որոնք կմեղմացնեն կառավարել այդ պահին զայրույթը, ինչը չի անդրադառնա երեխայի վրա, քանի որ անդրադառնալու դեպքում այն կարող է ունենալ տարբեր հետևանքներ: Ծնողները կիսվեցին իրենց նմանատիպ փորձով, տվեցին հարցեր, մասնագետի կողմից տրվեցին պարզաբանումներ և խորհուրդներ:
  Հաջորդ ամսվա սեմինարի թեման էր՝ «Դեռահասության փուլում դրսևորվող դժվարությունները»: Մասնագետի կողմից ներկայացվեց դեռահասության փուլում երեխաների հիմնական դժվարությունները, դրանց ճիշտ արձագանքելու ծնողների կարողությունները, որպեսզի դեռահասը լինի հասկացված և ոչ թե քննադատված: Խոսվեց նաև այն մոտեցումների մասին, որոնց արդյունքում դեռահասները սկսում են վստահել և կիսվել իրենց դժվարություններով ծնողի հետ: Իսկ ծնողի դերը օգնելն է, որ տղան կամ աղջիկը ձևավորվի առանց ավելորդ վախերի ու մեղավորության զգացողության: Ծնողները կիսվեցին իրենց ունեցած փորձով՝ հաջող կամ անհաջող, տվեցին հարցեր, մասնագետի կողմից տրվեցին

| |
|---|
| պարզաբանումներ և խորհուրդներ:<br>Սեպտեմբեր ամսին իրականացված ծնողական հանդիպում սեմինարի թեման էր՝ ինքնախնամք, ռելաքսացիա, ինքնախնամքին տրամադրվող ժամանակի հատկացում: Մասնագետը ներկայացրեց ծնողների՝ իրենց ինքնախնամքին տրամադրվող ժամանակի հատկացման կարևորության մասին: Հաճախ, ծնողները, ամբողջովին իրենց նվիրելով հաշմանդամություն ունեցող երեխաներին, ժամանակ և այլ ռեսուրսներ չեն ունենում իրենց ինքնախնամքի համար, ինչն ունենում է իր բացասական հետևանքները: Մասնագետը խոսեց հենց այդ հետևանքների մասին, և որ, ամեն դեպքում, հնարավոր է ժամանակ հատկացնել ինքնախնամքին, նույնիսկ ոչ ծախսատար ուղիներով: Ծնողները կիսվեցին իրենց փորձով և իրենց հանդիպած դժվարություններով, տվեցին հարցեր, մասնագետի կողմից տրվեցին պարզաբանումներ և խորհուրդներ: |

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| |
|---|
| Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:<br>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.<br>• Սոցիալ-հոգեբանական և վերականգնողական ծառայությունների մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաների/միջինում՝ 128 երեխա,<br>• Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների (մասնագիտական կողմնորոշում, գեղագիտական դաստիարակություն, անձի զարգացում) զարգացում/խմբակների գործում,<br>• Շահառուների ծնողների ընդգրկվածությամբ իրականացվող դասընթացներ/ծնողական 3 սեմինարների անցկացում,<br>• Համագործակցություն շուրջօրյա խնամքի հաստատությունների հետ: |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատանքների և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱՋԿ ՀԿ-ին պատկանող Արևածագ |

| |
|---|
| սոցիալական էջում: Հոդվածները հասանելի են հետևյալ հղումներով.<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1202478305254518<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1219332943569054<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1222962053206143<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1231245905711091<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1243777471124601<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1256586416510373<br>https://www.facebook.com/Arevatsag/posts/1262854922550189 |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ չեն առաջացել, որոնք կխոչընդոտեին կենտրոնի ծառայությունների անխափան մատուցմանը: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

- Ծառայությունների մատուցում կենտրոնի շահառուներին ըստ հաստատված ժամանակացույցի,
- Արտ թերապիայի և նկարչության, հելունագործության խմբակների գործում,
- Նոր շահառուների կարիքների և կարողությունների գնահատում, սոցիալական աջակցման պլանի կազմում, պայմանագրերի կնքում,
- Ծնողների համար 3 սեմինար հանդիպումների կազմակերպում, ամսեկան՝ 1,
- Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների հետ հանդիպումների իրականացում,
- ՄՄԾ տարածային կենտրոնի հետ համատեղ աշխատանքների իրականացում,
- Մարզպետարանի համապատասխան բաժնի հետ աշխատանք՝ վերամիավորված ընտանիքների, խնամակալ և խնամատար ընտանիքների հայտնաբերման և հնարավոր ծառայությունների մատուցման համար:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Կենտրոնի ծառայությունների մատուցման շրջանակներում ֆիզիոթերապևտի և ծնողական աջակցման խորհրդատուի հաստիքները կենտրոնի գործարկման ընթացքում նախատեսված չեն սույն ծրագրի աշխատանքային պլանով և բյուջեով, սակայն դրանք իրականացվում են «Ամբոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ առավել ամբողջականացնելով կենտրոնի կողմից մատուցվող |

ծառայությունները մարզի շահառուներին:

Իրականացվել է Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի մանկապարտեզի 37 ծնողների հետ ծնողական հանդիպում, որի ժամանակ խոսվեց երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների մասին՝ շեշտը դնելով հնարավոր խնդրների վաղ հայտնաբերման, դրա կարևորության, անհրաժեշտ քայլերի ձեռնարկման վրա: Մեծ կարևորություն ստացավ այսպիսի հանդիպումների անցկացումն ու ծնողներին լուսաբանումը:

Ծնողական այս հանդիպումների իրականացումը նույնպես կատարվում է «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2025.10.07 16:04:15 AMT